վարսակ, և պատուէր առ քաղաքապետն և առ դատաւորն Երուսաղէմի, վասն անտալ բռնութեանց Լատինաց, պաշտպան կալ Պատրիարքին և միաբանաց և ազգին Հայոց, հաստատուն պահել զնոսա 'ի սեփականութեան և 'ի սովորութեան իւրեանց, ՌՀԸ (1618)։

Ի սմին ժամանակի Գրիգոր Պարոն Տէր խնդրեաց հրաման 'ի դատաւորէն Երուսաղէմի 'ի ձեռն Աստուածատուր Թարգմանին իւրոյ՝ սակս նորոգութեան որմոց և սենեկաց Ս. Փրկչի, եւ յետ քննութեան 'ի ձեռն ճարտարապետի քաղաքին՝ և այլոց, հրամայեաց չինել, և նորա սկիզբն արարեալ նորոգեաց զաւերեալ տեղիսն. ՌՀԸ (1618)։

Լատին կղերք 'ի լուութեան իւրեանց, երկնէին չարիս 'ի միտս, որ և ծնան իսկ յետ ոչ բազում աւուրց, և յարուցին վէճս և հակառակութիւնս անդադրմանելիս, զի իբրեւ տեսին թէ՝ ոչ կարացին յաղթահարել զՀայս 'ի խնդիրսն Պատանատեղւոյն, և 'ի սոյն միջոցի կամեցան լուծանել զվրէժ նորին, և իսպառ նկուն առնել զնոսա։ Հայք կատարէին զհոգեւոր պաշտօնս իւրեանց յայրին Ծննդեան Քրիստոսի, 'ի տեղին Մսուր կոչեցեալ, Լատինք փորձ փորձեցին վանել անտի զՀայս, այլ ոչ կարացին հասանիլ ցանկութեան իւրեանց, որպէս գրեցաք յառաջագոյն, և 'ի սոյն աւուրս դարձեալ նորոգեցին զվէճն, և յայս նըւազ իսպառ արգելին զնոսա անտի՝ խափանելով նաեւ ըզպատարագն։ Լուեալ զայս Գրիգորի՝ չոքաւ առ դատաւորն՝ եւ խնդրեաց 'ի նմանէ կոչել զփոխանորդն Լատինաց, որում անունն էր Պաթիշթայ, և առաջի նորա ասէ՝ Հայք սովորութիւն ունէին 'ի վաղ ժամանակաց անտի մտանել յեկեղեցին Բեթղեհէմի, կատարել զհոգեւոր պաշտօնս՝ աղօթել եւ պատարագել յԱյրին Ծննդեան, լուցանել կանթեղս եւ զաշտանակս՝ այլովքն հանդերձ։ Իսկ այժմ փոխանորդն Լատինաց արգել զայս ամենայն։ Եւ 'ի հարցանել դատաւորին զփոխանորդն Լատինաց, արար նա պատասխանի՝ և ասէ, ոչ արգելումք զՀայս յերկրպագելոյ և ուխտս մատուցանելոյ 'ի տեղւոջ յայնմիկ, այլ արգելումք զՊատարագն և զհոգեւոր պաշտօնս նոցա, զի փականք Այրին Ծննդեան են 'ի ձեռս Լատինաց, եւ նոքա լուցանեն զկանթեղս. բաց յերկուց կանթեղացն